ձեռք են տալիս, գիւղացին խօսքի բռնում ու չիր թողնում:

Պառաւ մամերը շտապում են տուն, ծանր կողովներ բռնած, եւ իրենց գլուխը դողդողում է հաստատուր ձուկերի պոչերի նման:

Փողոցները բախւում են մէկը միւսի դէմ, եւ ձիւնը տանիքներից վայր է թափւում, երբ երախաները բարձր ծիծաղում են:

Մի տեղ՝ եկեղեցի: Բլուրի կողքին մի ուրիշ եկեղեցի ու աւելի հեռւում մի ուրիշը: Մոմերը վառուած են, դռները բաց են եւ ճանապարհները խուժում են լոյսերի վրայ:

Պատարագ են ասում: Զանգակները երերում են եւ լոյսը հոգիների մէջ այնպէս է, ինչպէս զանգակները, որ երերում են:

* * *

Նոր Բայազետի գործկոմը, հրացանը ուսին, մտածկոտ ման է գալիս: Տխուր է: Կարծես իր սրտի սոխակը ոտքի տակ ճզմել է: Ներսը կրակ են վառել, բայց ցուրտ է: Ման է գալիս միս մինակ եւ գիտական բոլոր նախադասութիւնները մոռացել է:

Վարը գիւղաքաղաքը շարժումի մէջ է: Ամէն ոք եկեղեցի է գնում, մոմ վառում, պատարագ լսում:

Վերայիշում է իր գիւղը, մանկութիւնը, տօնական օրի անհամբեր սպասումը: Հրացանը ուսից վար է սահում: Ուղղում է, «Տգիտութիւն, տգիտութիւն»,— մտածում է ու քայլերը արագացնում:

Եկեղեցու խաչը աչքերի մէջ այրւում է:

Տխուր է:

Կարծես իր սրտի սոխակը ոտքի տակ ճզմել է:

— Ընկեր գործկոմ, տելեֆոնը կանչում ա...

— Եկա՛յ:

Հեռաձայնը հիւանդ աքլորի նման պատուհանի ապակիների վրայ կանչում է: Գործկոմը հրացանը վար է դնում և շտապ մօտենում դոր ծիքին: Այդ միջոցին եկեղեցիի զանգը բամբ զողանջումով սկսում է հնչել:

— Շտո՞, կտո՞... Այս անիծեա՞լ զանգը... Բալասան Իվանիչ, դու ե՞ս... Ելենովկա՞... հա՛, հա՛... Ինչպէ՞ս... Աղբէր ժամի զրնգոցը չի թողնում թէ լսեմ... Ցեկա՞ն... հրամայում ա... պաստանալենի... հակակրօնական ցոյցե՞ր... Ցը՞...

— Տաւարի՛չչ Առաքել, Երիտմիութիւնը ժողովի հրաւիրիր անմիջապէ՛ս. հրամայում են հակակրօնական ցոյց սարքել...

— Երիտմիութիւնը գնացել ա ժամ...

— Դէ, մի բան արա...

Տաւարիչչ Առաքելը դուրս է գնում:

Իսկ վերջալոյսի զրնգող ճառագայթները, հեռաւոր եկեղեցական չարականների հետ խառնուած, գալիս բախում են գործկոմի սիրտը, ձեռքերի մէջ տենդ դնում, ճակատի վրայ բոյն կազմում ու տրորում ամբողջ իր էութիւնը:

Գործկոմը մօտենում է պատուհանին, մի քիչ բաց անում ու ականջ դնում:

Ցետոյ վայր է ընկնում աթոռի վրայ ու քթի տակ մրմռում.—

Այսօր տո՞ն է...

Այդ միջոցին տաւարիչչ Առաքելը մտել է ժամ: Տեղ չկայ որ շարժուի: Մատերի վրայ բարձրանում է, դէս դէն նայում, որպէսզի ժողովուրդը չկարծէ, որ աղօթելու է եկել: Երիտմիութիւնը՝ շա՞ն որդիք՝ չապիկ են հագել, խմբի մէջ երգում են:

Տաւարիչչ Առաքելը գլուխը վեր է բարձրացնում, բարկացած չորս կողմը նայում, բարձր հազում, գլխարկը ձեռքերի մէջ տրորում յետոյ օդի մէջ շարժում, երգեցիկ խմբի կողմը նշաններ անում՝ ոչ ոք չի նայում: Բարկանում է, աչքերը կոպերի տակ պտոյտ են գալիս, փայլում, չուում: Նորից հազում է, ոտքը ոտքին խփում, գլխարկը ճզմում: Ո՛ւֆ...

Եկեղեցին լիքն է եւ լուսաւոր: Մոմակալների առջեւ անհամար մոմեր են վառուած: Սեղանի ոսկիների միջից բուրվառը շարժւում է խունկի անուշ հոտը տարածելով, եւ մշուշի մէջ ճրագները կայծկլտում են երազի պէս: Երգերն էլ՝ այնքա՞ն ծանօթ... Առաքելը մի ինչ որ թմրածութիւն է զգում, անօթի փորով խմած գինու նման մթնոլորտը գինովութիւն է տալիս նրան, սրտի մէջ լուսաւոր վէրք բաց անում... Առաքելը զգում է վտանգը, ուզում է դուրս փախչել, բայց յիշելով գործկոմի հրամանը, դէպի դուռը ուղղուելու տեղ, հրը-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան